**Հավելված 2**
**2025 թ. հունվարի 23-ին**
**Կնքված N ԴՏՊ-1141-11018/25 ԱՌՀԵ18 պայմանագրի**

**Դրամաշնորհային հաշվետվություն N 1**

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | **«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում»** |
| **Դրամաշնորհի N** | **«ԱՍՀՆ-ԴՄ-ԵԽՑԾ-25/7-1»**<br>**ք. Երևան** |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | **«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն** |
| **Միջոցառման իրականացման ժամանակահատված** | 01 հունվար, 2025թ. - 31 դեկտեմբեր, 2025թ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01 հունվար, 2025թ. - 31 մարտ, 2025թ. |
| **Ներկայացման օր** | 10.04.2025թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Աննա Աբրահամյան՝ սոցիալական աշխատող |

2. **Բովանդակային հաշվետվություն**

2.1 **Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածում «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը արձագանքել է Երևան քաղաքի և հարակից տարածքների՝ ԿԴԻՀ մինչև 18 տարեկան 110 երեխաներին և նրանց ընտանիքի անդամների կարիքներին՝ տրամադրելով սոցիալ-հոգեբանական, կրթական, խորհրդատվական, վերականգնողական ծառայություններ: Բազմամասնագիտական թիմի կողմից շահառուներին տրամադրված աջակցությունն միտված է եղել խթանելու երեխաների սոցիալ-վերականգնողական, ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և/ կամ նրանց սոցիալական մեկուսացումը՝ խթանելով ԿԴԻՀ երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, նպաստելու համայնքի մշակութային կյանքին վերջիններիս մասնակցությանը, ինչպես նաև աջակցելու հաստատություններում խնամք ստացող երեխաների՝ ընտանիքների հետ վերամիավորմանը:

Ծրագրի շրջանակում բազմամասնագիտական թիմի կողմից կատարման ենթակա հիմնական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար հետևյալն են՝

- Տրամադրել սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն ԿԴԻՀ երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին:
- Տրամադրել սոցիալական, առողջապահական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատվություն/տեղեկատվական աջակցություն և ուղղորդում երեխայի ընտանիքի անդամներին:
- Տրամադրել կրթական աջակցություն՝ դասընթացների և միջոցառումների տեսքով երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին:
- Տրամադրել վերականգնողական/թերապևտիկ ծառայություններ երեխաներին:
- Տրամադրել սննդային աջակցություն (կենտրոնում գտնվելու ընթացքում) երեխաներին:

2.2 **Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Սոցիալական աջակցություն: Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է շահառուների հայտնաբերում և ընդգրկում: Իրականացվել է թվով 122 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաների և նրանց ընտանիքների կարիքների գնահատում, որոնցից Արցախից տեղահանված՝ թվով 10: Տնայցերի միջոցով իրականացվել է թվով 30 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաների և նրանց ընտանիքների առաջնային կարիքների գնահատում, որոնցից Արցախից տեղահանված՝ թվով 2: Տնայցերն իրականավել են ԱՀ ԲՀԿ սոցիալական աշխատողների և ՄՍԾ ՏԿ աշխատակիցների հետ համատեղ: Վերհանված կարիքներից ելնելով՝ սոցիալական աշխատողների կողմից ընտանիքներին տրամադրվել է սոցիալական խորհրդատվություն, անհրաժեշտ տեղեկատվություն, կատարվել է համապատասխան ուղղորդումներ: Շահառուների հետ կապը սոցիալական աշխատողների կողմից պահպանվել է կենտրոնում հանդիպումների, ինչպես նաև հեռախոսազանգերի միջոցով: Երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին տրամադրվող ծառայությունները իրականացվել են ցերեկային կենտրոնում, ըստ անհրաժեշտության՝ արտակենտրոն ձևաչափով: Իրականացված կարիքի գնահատման հիման վրա բազմամասնագիտական թիմային քննարկումների արդյունքում կազմվել է թվով 110 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաների անհատական սոցիալական ծրագրեր, որոնցից թվով 10 Արցախից տեղահանված երեխաների անհատական սոցիալական ծրագրեր: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտվել են թվով 110 երեխաներ և նրանց ընտանիքի անդամներ, որոնցից թվով 10 Արցախից տեղահանված երեխաներ և նրանց ընտանիքի անդամներ:

**Առողջապահական, սոցիալական եւ կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայությունների տրամադրում**. Բազմամասնագիտական թիմը, գնահատված կարիքի հիման վրա, ԿԴԻՀ երեխաներին և նրանց ծնողներին տրամադրել է համապատասխան խորհրդատվություն, ովքեր սոցիալական, առողջապահական և/կամ կրթական ոլորտներում հանդիպել են խոչընդոտների: Յուրաքանչյուր դեպքին համապատասխան սոցիալական աշխատողը կատարել է ուղղորդումներ, ինչպես օրինակ կրթական գործընթացում ընդգրկվելու, առողջապահական ծառայություններից անխափան օգտվելու նպատակով և այլն: Արդյունքում ապահովվել է շահառուների՝ անխոչընդոտ կրթություն ստանալու, առողջապահական հաստատություններից օգտվելու իրավունքը: Երեխաները և նրանց ընտանիքի անդամներն ակտիվ ներգրավվել են որոշումների կայացման փուլում, ծառայությունները տրամադրվել են գնահատված անհատական կարիքի հիման վրա: Սոցիալական աշխատողի ուշադրության կիզակետում է եղել երեխաների կրթությունից դուրս մնալու դեպքերի հայտնաբերումը, համապատասխան միջամտության իրականացումը և նրանց՝ կրթական համակարգում ընդգրկվածության ապահովումը, ինչպես նաև երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը՝ բոլոր հնարավոր դեպքերում:

**Հոգեբանական աջակցություն:** Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվող ծառայության շրջանակում հոգեբանների կողմից տրամադրվել է հոգեբանական խորհրդատվություն երեխաներին և նրանց ծնողներին, իրականացվել են հոգեբանական անհատական և խմբային հանդիպումներ: Հաշվետու ժամանակահատվածում հոգեբանի կողմից տրամադրվել է հոգեբանական անհատական աջակցություն թվով 57 ԿԴԻՀ երեխայի, որոնցից թվով 4 Արցախից տեղահանված երեխաներ: Ցերեկային կենտրոնում գործող խմբակներում հոգեբանների կողմից պարբերաբար իրականացվել են դիտարկումներ, ծնողներին տրամադրվել խորհրդատվություն:

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում երեխաները մասնակցել են **«Արտ-թերապիայի» խմբակի աշխատանքներին**: Աշխատանքները միտված են եղել օգնելու երեխաներին գիտակցել և արտահայտել իրենց զգացմունքները, վեր հանել իրենց ուժեղ և թույլ կողմերը: Խմբակի ծառայությունները նպաստել են երեխայի հուզական կայունությանը, հասակակիցների հետ շփմանը, ինքնուրույնությանը, մանր և խոշոր մոտորիկայի զարգացմանը: Խմբակն ուղղված է եղել թիմում համագործակցելու կարողությունների զարգացմանը, ուշադրության կենտրոնացման հմտությունների ձևավորմանը, ինքնամփոփության հաղթահարմանը, ինքնավստահության ձևավորմանը, նոր միջավայրին հարմարեցմանը: Խմբակն ունեցել է թերապևտիկ բնույթ: Երեխաների հետ աշխատանքը կազմակերպվել է հավասարը հավասարի սկզբունքով հասակակիցների հետ շփման միջոցով՝ բացառելով ցանկացած տեսակի խտրականության կիրառումը՝ ըստ ընտանեկան կարգավիճակի և հաշմանդամության: Երեխաները խմբակում ներգրավված են եղել կենտրոնի մասնագետների՝ սոցիալական աշխատողների, լոգոպեդների և հոգեբանների գնահատման արդյունքում՝ ուղղորդումների հիման վրա: Խմբակին մասնակցություն են ունեցել թվով 74 ԿԴԻՀ երեխաներ, որոնցից թվով 2 Արցախից տեղահանված երեխաներ:





Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում երեխաները մասնակցել են **կավագործության խմբակին**: Աշխատանքները միտված են եղել կավաթերապիայի միջոցով երեխայի ուժեղ կողմերը բացահայտելուն և զարգացնելուն, որը նպաստում է երեխայի առավել հեշտ ինտեգրմանը հասարակական տարբեր միջավայրերում: Կավաթերապիան ուղղված է եղել ստեղծագործական մտքի զարգացմանը, նյութով աշխատելու հմտությունների բարելավմանը և խմբային աշխատանքի միջոցով նպաստել բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծմանը միմյանց միջև: Կավաթերապիային մասնակցություն են ունեցել թվով 34 ԿԴԻՀ երեխաներ, որոնցից Արցախից տեղահանված թվով 6 երեխաներ:

**Լոգոպեդական ծառայություն**

Խոսքային խնդիրներ ունեցող երեխաների համար տրամադրվել է լոգոպեդական ծառայություն, որի արդյունքում թվով 42 ԿԴԻՀ երեխաներ, որոնցից թվով 5 Արցախից տեղահանված երեխաներ օգտվել են տվյալ աջակցությունից և գրանցել դրական դինամիկա: Աշխատանքներն ուղղված են եղել երեխայի մոտ հաղորդակցման կարողությունների ձևավորմանը, հաղորդակցման այլընտրանքային միջոցների կիրառմանը (PECS, ARMAV AAC), հնչյունահնչյութային գործընթացների զարգացմանը, խոսքի ընկալման ձևավորմանն ու զարգացմանը, կապակցված խոսքի և բառապաշարի հարստացմանը, դիզլեքսիային և դիզգրաֆիային ուղղված շտկման աշխատանքներին: Ցերեկային կենտրոնում գործող խմբակներում լոգոպեդների կողմից պարբերաբար իրականացվել են դիտարկումներ:






**Ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին սննդային փաթեթի տրամադրում:** Կենտրոնում գտնվելու ընթացքում յուրաքանչյուր ծառայություն ստացող երեխա մեկ անգամ օգտվել է սննդի փաթեթի աջակցությունից:

**Կրթական աջակցության տրամադրում երեխաների և նրանց ծնողներին:**

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում երեխաները մասնակցել են միջոցառումների՝

- 19.02.2025 թվականին տեղի է ունեցել գրքի տոնին նվիրված միջոցառում: Միջոցառման շրջանակներում ներկայացվել է Հովհաննես Թումանյանի կենսագրությունը, տեղի է ունեցել տեսաֆիլմի դիտում, երեխաները ասմունքել են և ծանոթացել են գրողի ստեղծագործություններին: Միջոցառման ավարտին երեխաները միմյանց նվիրել են իրենց ձեռքով պատրաստված գրքեր: Մասնակցել են թվով 10 ԿԴԻՀ երեխաներ:

- 07.03.2025 թվականին տեղի է ունեցել «Բարև Գարուն» թեմայով միջոցառում: Միջոցառման ավարտին երեխաները ստացել են նվերներ: Մասնակցել են թվով 28 ԿԴԻՀ երեխաներ:

- 25.03.2025 թվականին տեղի է ունեցել «Գարնան գույները» թեմայով միջոցառում: Միջոցառման վերջում երեխաները նախապատրաստական աշխատանքներ են կատարել Սուրբ Զատիկի տոնի համար: Մասնակցել են թվով 15 ԿԴԻՀ երեխաներ, որից թվով 1 ԿԴԻՀ Արցախից տեղահանված երեխաներ:






Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայությունների օգտվել են 110 երեխա, որոնցից 10-ը Արցախից տեղահանված:

**Ծառայությունների մոնիտորինգ**

Ծառայությունների որակի շարունակական բարելավման նպատակով շահառուներին հնարավորություն է տրվել գնահատել տրամադրված ծառայությունները՝ նախօրոք մշակված անանուն հարցաթերթերի միջոցով: Երեխաների ծնողների կողմից լրացված 80 հարցաթերթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ երեխաների ծնողները գոհ են տրամադրված ծառայություններից, կա զգալի/շոշափելի արդյունքներ հատկապես հատուկ կարիքներ ունեցող երեխաների առաջընթացի մասով:

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած**

**խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնում ծառայություն ստանալու նպատակով ընտանիքների մեծ թվով դիմելիությունը որոշակի առումով խոչընդոտ է առաջացրել, քանի որ երեխաների մեծ մասը ունեն հոգեբանական աջակցության կարիք, ինչպես նաև խոսքային և վարքային խանգարումներ, հետևաբար մատուցվող ծառայությունները պետք է լինեն համալիր և երկարաժամկետ: Իսկ վերոնշյալ երեխաների արդյունավետ աջակցության կազմակերպումը ենթադրում է հավելյալ մասնագիտական մարդկային ռեսուրսներ:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվում է հայտնաբերել Երևան քաղաքի և հարակից տարածքների ԿԴԻՀ երեխաների, տունայցերի միջոցով գնահատել նրանց առաջնային կարիքները, դիտարկել և իրականացնել հետևյալ ծրագրային գործողությունները՝

- Տրամադրել սոցիալ-հոգեբանական ծառայություն և խորհրդատվություն ԿԴԻՅ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին:
- Տրամադրել սոցիալական, առողջապահական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատվուլուն/տեղեկատվական աջակցություն և ուղղորդում երեխայի ընտանիքի անդամներին:
- Տրամադրել վերականգնողական/թերապևտիկ ծառայություններ:
- Տրամադրե կրթակա աջակցությու դասընթացներ և միջոցառումներ տեսքո երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին:
- Տրամադրել սննդային աջակցություն (կենտրոնում գտնվելու ընթացքում) երեխաներին:
- Տրամադրել «Ցերեկային խնամքի կենտրոնում և /կամ դրանից դուրս գտնվելու որոշակի ժամանակահատվածում հաշմանդամություն ունեցող երեխային ըստ անհրաժեշտության ուղեկցող»-ի ծառայություն,